

ԱԿՕՍ

Թ Ի Ի 1 2 9 1 2 Ա Պ Ի Ի Լ 2 0 2 1

Համավարակն ալ կը պայքարի մեզի դէմ

Իբրև լրատուութիւն որքան ալ ճանճրացուցիչ թուի, անխուսափելի է Համավարակը, որ ամբողջ աշխարհը առած է իր ճիւղաներուն մէջ եւ չարտօնէր թէ ցանկացած այլ նիւթ գաճաճիկէջ ընէ գինը: Աշխարհի որ երկրին մէջ ալ գտնուինք բոլոր լրագրողներ երևույթը կը դիտեն նախ իրենց ապրած երկրէն, կը մենկարանին սեփական դիտումներով նկատած թերութիւնները եւ ապա կը շրջեն իրենց հայեացքը դէպքի այլ երկրները եւ կը տեսնեն թէ թերութիւնները Համաշխարհային բնոյթ ունին եւ փոքր ինչ տարբերութիւններով կը վերաբերին Համայն մարդկութեան: Թէ կանխա-միջոցներու գործադրութեան, թէ բաղաբաղակներու մատուցած զբաղմունքը բարեփոխելու առաւ-մով կը հանդիպինք իրերանման թերացումներու: Նման է նաեւ պատուաստանիւթ Հայթաիթե-լու խնդիրին մէջ գոյացած դժուարութիւնները: Կեանքը՝ որուն երեւոյթներուն սովոր էինք մեր նախորդ օրերէն, ի հիմանէ շրջուած է եւ յայտնի չէ թէ, ե՞րբ պիտի վերադառնանք կամ նոյնիսկ յայտնի չէ թէ պիտի կրնանք վերադառնալ թէ ոչ:

Մէկ բան որ յստակ է, մահուան եւ վարակման զէպքերը կը շարունակեն անել եւ աւելի մտա-հոգիքը ժահրը կը դիմադրէ յատուկութիւն փոխելով եւ ի սպաս կը Հանէ ցարդ տարուած աշխա-տանքները:

Ողջոյն մահը մահով յաղթողներուն



«Մահուամբ գմահ կոխեաց եւ յարութեամբն իյրով մեզ զկեանս պարգեւեաց, նմա փառք յափրեանս. ամէն»: Այսպէս կը բնութագրէ Յարութեան Տօնի շարականը, որ կ'ընթանք Զարկի փառալուստին: Սուրբ Զարկի խորհուրդը բոլորիս կը յուշէ վերակենդանացում: Բան

մը՝ որ զբաղեցուցած է մարդկային միտքը պարմութեան հնագոյն ժամանակներէն ի վեր: Այսօր կարծես թէ օդի կամ ջրի նման անհրաժեշտութիւն մըն է յոյսը, որ օրըստօր կը կորսնցնենք աշխարհով մէկ: Իսկ յոյսի սպառումը կեանքի վերջակէտ կրնայ դառնալ: Ուրեմն

պարտաւոր ենք յոյսը վառ պահելու, որուն եղանակներէն մէկն ալ եղած է մահուն ճամբով անմահանալու խորհուրդը: Յիշենք Մովսէս Խորենացու պարգամը «Մահ չիմացեալ մահ, մահ իմացեալ անմահութիւն»: Այս հաւատք ու գիտակցութեամբ կը

պարտաւորուինք դիմաորել Սուրբ Զարկի փօնը, որու խորհուրդով պիտի յաղթահարուի Հայոց երկրի եւ առհասարակ երկրագունդի վրայ կուրակուած սեւ ամպերը: Այս հաւատքով ու յոյսով «Քրիստոս Յարեալ Ի Մեծերց» Օրինեալ է Յարութիւն «Քրիստոսի»:




Փառք Հիմնադրին

Հազիւ ամիսներու տեւողութեամբ Հիմնադրութեամբ թերթի մը տասնամեակն էր: «Ակօս»ի անձնակազմը իր Համակիրներով ճաշարանի մը մէջ ուրախութեամբ նշած էին թերթին անցած ճանապարհը: Այդ օրէն յիշատակ մնացին Հրանդ Տիրքի ամենատաղի լուսանկարները: Իրաւ ալ Հրանդ, որ անմահացած է բազմաթիւ լուսանկարներով կամ վիտէօ ժապաւէններով, իր արտաստուածութեամբ մէջ կը ներկայանայ մերթ խոր մտորումներով, մերթ ալ խիզախ պոռթկումներով: Այդ երեկոյան նկարներուն մէջ ան կը վայելէր յաղորդած ըլլալու ուրախութիւնը, յաղթանակի խիստը:

Տիրք չարժանացաւ «Ակօս»ի 11-ամեակը վայելելու: Ինչպէս որ մենք, մնացողներս անգամ մը եւս չարժանացանք տասնամեակի ոգեւորութիւնը ըմբռնելու: Եթէ զուգահեռ չըլլար Ս. Զատիկի տաղաւարին, թերեւս մենք ալ աննկատ պիտի թողէինք Հիմնադրութեան 25-ամեակը: Պատահականութիւն մըն էր, թերթին առաջին Համարը լոյս տեսաւ 1996-ի Ապրիլի 5-ին, որ նաեւ Զատիկի կը տօնէինք: Որքան ալ օրագուցային փոփոխութիւններով սեղաւոր ընէ, մենք թերթին տարեգրածը կ'ապրենք Ս. Զատիկին, մտքի մէջ ունենալով Հանդերձ 5 Ապրիլ թուականը: Երբ որ սես որ, ինչպէս մենք Հրանդի սպանութենէն հոք անգամ մըն ալ չենք ունեցած թերթին Հիմնադրութեան տարեգրածը նշելու տրամադրութիւն, Զատիկ տօնն ալ զրկած է մեզ ուրախանալէ:

Յիշելով «Մամոսթէ Սարգիս»ը



28 Մարտը մահուան թուականն է «Ակօս»ի հայերէն էջերու վաստակաւոր խմբագիր Սարգիս Սերովբեանի: Ակօսականներու կոչումով Պարոն Սարգիս հիմնադրութենէն սկսեալ մինչեւ իր կեանքի աստիճանը օրինակելի կերպով վարեց իրեն վարած խիստ պարասխանաւոր պաշտօնը եւ «Ակօս»ի հայերէն էջերը վերածեց բոլորովին անկախ հարթակի մը, որուն վրայ լայն տեղ կը բերուի հայ ազգագրական գանձանքի երկոյթներուն: Ոչնչացման դատաւարութեամբ արեւմտահայութեան մշակութային ժառանգը դարձնալ Սերովբեանի ուշադրութեան կիցակէտն էր: Ան նաեւ պարմագէտը շրջիկ մը քայլ առ քայլ այնցած էր Արեւմտեան Հայաստանի բազմաթիւ քաղաքներ, որու ընթացքին մշակած էր նաեւ անհամար բարեկամութիւններ մանաւանդ ալ պայմաններու բերմամբ կրօնափոխ եղած, բայց իրենց արմատներու հանդէպ հաւատարմութիւն ցուցաբերած հայերու հետ:

Վճիռի արդարութիւնն չէ բերած

Իսթանպուլի 14-րդ Եղեռնադար Արեւնը միջակէտ մը դրած եղաւ 14 փարուայ պարմութեան մը վերածում Վրանդ Տիրքի սպանութեան դատարկութեան: 26 Մարտ օրը օր Զաղլարայի դատարանին մէջ կայացած նիստի ընթացքին ամբաստանաւերու վերջին հայցերը լսելէ վերջ դատակազմը ցկեանաւ բանարկութեան դատաւարեց նախկին ոստիկանապետներ Ռամսան Աքիլիթը եւ Ալի Ֆուաթ Ելմազը: Այս երկուքը նման պարիտի մը արժանացան ծրագրուած մարդասպանութեան մեղադրանքով: Բացի այդ անոնք գանձազան պարիտներ եւ սրացան պաշտօնական փաստաթղթերը ոչնչացնելու կամ պաշտօնական փաստաթուղթերը խեղափոխելու յանցանքներու համար:



Նոյնպէս ցկեանաւ փանարկութեան դատաւարութեամբ է նախկին սպայ Մուհարրէմ Տեմիրքալէ, որ կը մեղադրուի ծրագրուած մարդասպանութեան օժանդակելու յանցանքով: Օրան Շիմշեք, Վլէսկ Ըահին եւ Տրապիզոնի Ռափիկան Զօրաց նախկին հրամանարար Ալի Էօզ 25-ական փարի ազգագրական դատաւարութեան: Դատարանը կարգ մը մեղադրեալներու համար գանձազան ազգագրական պարիտներ փայլէ զայի խումբ մը մեղադրեալներ ալ անպարպ հռչակուեցան:

Դատարանի վճիռի յայտարարութենէ ետք Վրանդ Տիրք ընդամենին իրաւապաշտպան Հաքան Պաքըրճօղլու դատարանի մուտքին մեկնաբանեց կայացած վճիռը եւ անգամ մը եւս նշեց այս դատարկութեան թերացումները: Նոյն շեշտը դրին նաեւ «Ակօս»ի խմբագրապետ Երուարդ Տանձիկեան, «Վրանդի Ընկերները» հարթակի բանբեր Պիլվենք Ալպըն եւ «Լրագրողներ Առանց Սահմանի» միջազգային կազմակերպութեան Թ-Ռոքիոյ ներկայացուցիչ Էրօլ Էօնսերօղլու:

Նոյնպէս Վրանդ Տիրք ընդամենին ալ հրապարակեց մամուլ յայտարարութիւն մը, որու մէջ կը նշուէր թէ 14 փարուայ դատարկութեան ընթացքին դիտումատր կերպով անտեսուած է այս ոճիրի բուն պարտկարտները եւ կազմակերպիչները: «Դատարան համակարգին այս ատրիան վարկազրկուած պայմաններու մէջ արդէն կարելի չէր արդարութեան կայացումը...: Մենք որպէս Վրանդի ընդամենին, ընկերները, փաստաբանները եւ անոր դազաղը ուսմբարձ փրտուր բարեկամները պիտի չվիտարինք այս արդարութեան պայքարի մէջ: Մինչեւ որ ամբողջ մերկութեամբ յարկանալ այս սպանութեան փրտի փրտող մարդերը» ըսուած է ընդամենին յայտարարութեան մէջ: Փաստաբան Հաքան Պաքըրճօղլուն ալ նշած է որ պիտի առարկեն այս որոշումին:

Սերովբեանի խմբագրական կամ պարմութեան գործունէութիւնը ունէր մասնագիտական որակ, որ ապահովուած էր ամբողջովին ինքնու ջանքերով: Ան օգտուելով իրեն ասանուած գիտելիքներու պաշարէն, մերօրեայ վկայութիւնները բերաւ անցնալի գիտելիքներուն վրայ: Կրնանք սրտաբազ կերպով խոստովանիլ թէ «Ակօս»ի հայերէն էջերու վրայ զգալի է իր բացակայութեան հետեւանքները, քանի որ դիպրին չէ նուիրումով արքայող գրիչ մը հեղափոխութեան դաշտը լիիրաւ կերպով փոխարինել:

Դատարանը կարգ մը մեղադրեալներու համար գանձազան ազգագրական պարիտներ փայլէ զայի խումբ մը մեղադրեալներ ալ անպարպ հռչակուեցան:

Աագ Ծաբթուան Եւ Սուրբ Զարկի Արարողութիւնները ղոնփակ կը կատարուին



Աղօթքները կատարել եկեղեցոյ մէջ, միշտ յարգելով առողջապահական պայմանները, որոնք են Ա. Թնչակապի գործածութիւն Բ. Հականեմիսի գործածութիւն Գ. Ընկերային հեռուորութեան պահպանում: Նկարի ունենալով որ արարողութիւններ ու Սուրբ Պարարագի մարտցումները կը կատարուին ղոնփակ կերպով, նաեւ գիտակցելով թէ Աագ Ծաբթուան եւ Ս. Զարկի առթիւ մեր ժողովուրդը կը փառաբան Սուրբ Հաղորդութիւն պարմալ, սիրով կը յորդորենք, որ Սուրբ Հաղորդութիւն սրանալ փառաբանութեամբ ժամանակացոյցի մէջ նշուած արարողութեան ժամերէն յետոյ դիմեն եկեղեցիներու հոգեւոր հովիւներուն: Վստահ ենք, թէ հաւատարմեաց ժողովուրդի առողջօրինը նկարի ունենալով կատարուած այս կարգադրութիւնները կը դիմաորին հասկացողութեամբ:

Կուտակուած այքան ճախողութեան դիմաց եթէ կայ յուսադրելի լոյս մը, ան ալ կը պարտաւոր Զատիկին, աւելի ճիշդ՝ Զատիկի խորհրդին: Թողնք Յարութեան Հրաշքի մասին սուրբբարիքի պատումը եւ ականջ տանք շարականին որ կը յայտարարէ «Մահուամբ զմահ կոխեաց, եւ Յարութեամբն իբրով մեզ զկեանս պարգեւեաց»:

Իր սեփական մահով կեանք պարգեւելու տօնն Զատիկը: Մեզայ բաղաւտութեան Համար, բայց իրաւացի ենք երբ կը տարկինք մտածելու թէ Հրանդ Տիրք ալ բայեց իր Գողգոթեան, խաչուեցաւ մեզ կեանք պարգեւելու տեղանքով: Անցած ենք քառօրը դարով ճանապարհ մը, եւ թողած ենք խոր հետքեր, որոնց համար նպաստակ չունենք յաւելելու Համեստութիւն ցուցաբերելու: Գիտենք թէ Հաճելի չէ ինքնագովութիւնը, բայց երբ կը հաստատենք թէ գիրը կը մտայ, չենք կրնար խուսափել նաեւ ժամանակի վկայութիւնը բերելէ:

Եթէ այսօր պղտաւալ իրողութեան մէջ ունենք դիմադրելու կարող երկտասարդ լից մը, այդ մէկուն ձեւաւորման մէջ կարեւոր առաջնորդ մըն էր Տիրք, որուն Համար ամենայն սրտաբացութեամբ կրնանք հաստատել «Նմայ փառք, յափրեան»:

ԱԿՕՍ

ԱՐՏՈՒՍՏԵՐ՝ AGOS YAYINCILIK BASIM HIZMETLERI SAN. VE TIC. LTD. ՏՒՆ. անունով՝ Բահիլ Տիք, ՀԻՄՆԱԳԻՐ Հրանդ Տիք, ԽՄԱԳՐԱԿԱՆ ՎԱՐԻՉ՝ Եղորտ Տանձիկյան, ՊԱՏԱՍԽԱՆՍՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԱԳԻՐ՝ Ֆերիա Պալանճար, ՀԱՅԵՐԷՆ ԲԱԺՆԻ ՊԱՏԱՍԽԱՆՍՈՒ՝ Բագրատ Էսդուգեան ՀԱՍՅԷ՝ Փափա Ռոնգալի փողոց, թիվ՝ 128, Հարպիյե 34373 Շիշլի - ԻՍԹԱՆՊՈՒԼ Հեռաձայն՝ 0533 195 32 41 - 0543 970 99 00 ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ՝ Տիւնիս Սիւիէր Վէյ Օֆսէթ Ա.Շ. 100. Ելլ Մահալլէի, Պաղճըլար-Իսթանպուլ: Հեռաձայն՝ 0212 629 08 08 ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՆՆԵՐԻ՝ Թուրքիա՝ 6 ամսան 200 ԹԼ. րարեկան 400 ԹԼ. Երրպա՝ 6 ամսան 110 Երո, րարեկան՝ 200 Երո, Ամերիկա եւ Գանադա՝ 6 ամսան 150 Տղար, րարեկան 275 Տղար, Ասորիայի՝ 6 ամսան 150 Տղար, րարեկան 275 Տղար: www.agos.com.tr

Շնորհատրանք Ս. Զափկի ու ջերմագին բարեկներ Աղեքսանյորիայէն




ՆՈՐԱՅՐ ՏԱՏՈՒՐԵԱՆ

Երբ ամիս առաջ, Դեկտեմբերի վերջին Օրերուն, յարգելի ընթերցող, ձեզի ներկայացուցեր էի 1900-1930-ական թուականներուն գրի առնուած ամանօրեայ հայկական բացիկներ, որոնք ունէին նրբաճաշակ ձեւագիր եւ ազնիւ լեզու ջերմ ու պաշտօնական: Իսկ այսօր, երբ հայկական աշխարհը կը պարբարարուի Յիսուս Քրիստի հրաշափառ յարութիւնը փոսելու, այս անգամ կը փափաքիմ վերանայիլ Զափկիը եւ Ս. Յարութիւնը շնորհատրող 1920-30-ականներու հայկական բացիկներու համետք մէկ փրցակին: Գիրքն: Բարեկրթութեան օրէնքներուն կը հակառակի ուրիշ նամակը կամ բացիկը ընթերցել: Սակայն, սակա կը կարարեմ ձեր թոյլտրութեամբ եւ այդ սակաակեաց թղթիկներուն երկրորդ կեանք մը պարգեւած ըլլալու հաճոյքով:

Կարծէ յիշել, թէ 1915-էն յետոյ, ի վարքերութիւն Օսմանեան կայսրութեան բնակիչ հայ ընթանիքներու նախորդ փաստաձեւներուն ուղարկուած բացիկներու, դարձած է Տրապիզոնէն, Զմիւռնիայէն, Օրբուսէն, Սամսոնէն կամ Նիկոմիդիայէն դէպի Պոլիս եւ հակառակ ուղղութեամբ հասցեագրած շնորհատրական բացիկներու հոսանքը: Յայտնուած են նոր ուղղութիւններ՝ ինչպէս Պոլիս-Ֆրանսա, Պոլիս-ԱՄՆ, Եգիպտոս-Պոլիս: Ահա այդ օրերէն մնացորդ 6 բացիկ՝ նոյն օրերու համաշխարհային կեանքը նկարագրող համառօտ փոնակներով:

Առաջին երկու բացիկները կը կրեն 1924 թուականը: Այդ փարի Զափկը 20 Ապրիլին էր: Եթէ չէր յիշեր, թէ աշխարհի վրայ ինչքեր պարտաւեր էին 1924-ին՝ ահա հակիրճ ակնարկ մը: Ռուսաստան. Ս. Պերսպուրգը վերանուանուեցաւ ու դարձաւ Լենինկրադ, մահացաւ ու Կարմիր Հրապարակի մէջ թողուեցաւ Լենինը: ԱՄՆ. Հիմնուեցաւ IBM եւ MGM ընկերութիւնները: Գերմանիա. Հիմնուեցաւ Mercedes-Benz ընկերութիւնը: Ֆրանսա. Փարիզի մէջ սկսան ուղիմպիական խաղերը: Իսկ վերապարծ եւ վերաշինող հայկական աշխարհի համար բարեբեր փարի էր 1924-ը: Երեւանի մէջ բացուեցաւ բամբակագործ գործարանը, Մարտիրոս Մարեանի ղեկավարութեամբ հիմնադրուեցաւ «Գիրք» հրատարակչական ընկերութիւնը: Ծնունդներով բախարատուած փարի էր նաեւ 1924-ը. Փարաշանով, Պարոյր Սեակ, Զահարա, Ծաղ Ազնուտր, Գոհար Գասպարեան... 1924ին բոլոր նորածիններ էին: Բայց, Զափկէն երկու շաբաթ առաջ մահացեր էր Մարտէոս Զարիֆեանը, հայկական քնարական բանաստեղծութեան վերջին ներկայացուցիչը:


1924-ի առաջին բացիկի դիմերեսին վրայ կայ լեռն հոշակատր դերասանուհի Էլենա Մարովաբայի լուսանկարը, իսկ դարձերեսի վրայ հերետեայ գրութիւնը. «Սիրելի Սիւզիս, կը շնորհատր[եմ] Ս. Զափկը մաղթելով երկար եւ երջանիկ փարիներ: Քու անկեղծ ընկերուհի Մաննիկ: Ապրիլ 1924: Constantinople, Pera»: Երկրորդ բացիկը ունի չափազանց մանր ու ազնիւ ձեւագիր: Ուսանող Գաւաֆեանը գրեր է. «Առ սիրելի հայրիկս, Սրբ. Զափկի առթիւ ձեզ կը շնորհատրեմ, երկայն եւ երջանիկ



փարիներ եւ նաեւ Օր. Եպրազիկն ալ եւ ձեր գործերուն յաջողութիւն կը մաղթեմ: Քեզ մըրածող գաւակի Ա. Գաւաֆեան, աշակերտ Մուրադ-Ռաֆայէլեան վարժարանի: 18.IV.1924»:

«Joyeuses Paques»՝ ահա թէ ինչ է գրուած 1926-ի բացիկի դիմերեսի վրայ: Հոն պարտաւերուած է երկար պարանէ կախուած սիրունիկ պարանի մը դեղձան, որ կը փորձէ խոշոր ոսկեգոյն գանգակ մը դողանջել: Իսկ ցարկերտող ցնծուն գառնուկ մը կ'անտր գարունը: Բացիկի դարձերեսը ունի ընդիր ձեւագիր կապոյտ մկանով գրուած. «Սիրելի Ս. Ներկարի եւ մօրերօր Ս. Զափկի փոսին առթիւ անկեղծ շնորհատրութիւններ եւ յաջողութիւններ: [Արձնթեմնէի ստորագրութիւն]: Pour M/eur et M/me Mokossian, 30 Mars

1926, Yenikeuy»: Հոն դուր կ'ուզէր գիտնալ, թէ ինչէր եղան 1926-ին: Կարեւոր բաներ: Գերմանիա. Հիմնադրուեցաւ Luftansa օդանավային ընկերութիւնը: Սպանիա. Ֆրանսոս դարձաւ երկրի Հրամանաւարը: Թուրքիա. երկիրը անցաւ Գրիգորեան օրացոյցին: Հայաստան. Երեւանի մէջ հիմնադրուեցաւ կարի առաջին գործարանը, Արզնի մէջ բացուեցաւ առողջարան: Պէրթ է նաեւ յիշել, թէ այդ փարի Պոլսոյ մէջ ծնաւ բանաստեղծ Զարեհ Խրախումբի:



Իրար. երկիրը անկախացաւ: Իրալիս: Հիմնադրուեցաւ Roma ուղեագնական ակումբը: Գերմանիա. Լոյս տեսա Ֆրից Լանկի աշխարհահոշակ, ապագայապաշար Metropolis շարժանկարը: Իսկ հայկական աշխարհը ցնցուեցաւ երկու մահով, ԱՄՆի մէջ իր աչքերը փակեց Անդրանիկ Օզանեանը, իսկ Երեւանի մէջ Շուշանիկ Կորոյնեանը: Մէկ այլ ֆրանսական բացիկի մը վրայ գրուած է. «Շար սիրելի Քոյրս Ժոզէֆին, Քեզի եւ ամենող կը մաղթեմ Յիսուսի Ա. եւ հրաշափառ Յարութիւնը [...] զալ փարի միասին եւ մէկ փեղ պիտի կարարենք: Այս է որ կը խնայեմ Ապումմէ: Աղօթեմք, եղիցի, եղիցի...: Քոյր Յովհաննէս Բագեզեան: 17-4-1930, Marseille»: Ահա այս կարօտալի խօսքերով շնորհատրեց Յովհաննէսը իր բոք Ս. Յարութեան փոսը: Այս բացիկի դիմերեսին վրայ կայ ծաղկաւ ճիւղի մը վրայ դրուած կողով, որ լի է հակիթներով: Անոնց մէջէն նորափետրու ճուրիկներ երգ կերպն ու կ'անտր ցարունը- «Joyeuses Paques»: Մինչ Յովհաննէսը կը փափաքէր յաջողոր Զափկը փոսել իր ընթանիքի հետ, աշխարհի ուրիշ ծայրերը մարդիկ ունէին այլ ապրումներ եւ մտախոգութիւններ: ԱՄՆ. Առաջին անգամ լոյս տեսաւ «Mickey Mouse»ը: Ռուսկոյալ. Առաջին անգամ փեղի ունեցաւ FIFA աշխարհի բաժակի խաղերը, որ աւարտեցաւ հիւրընկալ երկրի ախոյեանութեամբ: Հայաստան. Մահացաւ ամենայն հայոց կաթողիկոս Գեորգ Ե. Սուրենեանը: Թուրքիա. Բանակը ներխուժեց Պարսկաստան քրտական զինեալ ոյժերը հեթապիղեւու համար: Կառավարութիւնը միջազգային մարմիններուն դիմեց Կոնստանտնուպոլիսը եւ Ազգորան վերանուանելու, որպէս՝ Իսթանպուլ եւ Աքքարա:

«Famille K. Aba, Pangalti, Cayir 11, Istanbul (Turquie)» Գարնան այդ օրերուն Պարոն Սազայեանը անկախած գիւրէր, թէ Եգիպտոսի թագաւոր Ֆարուքը Յունուարին ամսանացեր էր Սաֆիանազ Զիլֆիթարին հետ ու հարսը դարձեր էր հոշակատր Թագուհի Ֆարիսան: 1938-ի Փետրուարին առաջին անգամ արքայադուրեցաւ «Նայրոն» ակունքի խոզանակը, Մարտ ամսոյն մէջ Սաուրական Արաբիոյ հողերու վրայ առաջին անգամ գործուեցաւ քարիղը եւ Գերմանիան գրաւեց Ասորիոյ: Սակայն, Պարոն Սազայեանը չէր գիտեր, թէ այդ բացիկն օրեր անց ԱՄՆ-ի մէջ մարտաւեր անգամ լոյս պիտի տեսներ «Superman»ը, Յունիսին Իրալիսան պիտի փրանար ուրեմագնակի աշխարհի բաժակին եւ Ալեւելեան Միջերկրականի Հաթայ քաղաքը պիտի հոշակէր իր անկախութիւնը: Յարգելի ընթերցող, վերջին փողոս երախարափարական խօսքեր են մեծ մարտաւեր, հայաստր Նանսէի հասցէին, ան որ օգնեց հայ գաղթականներուն, բազմաազգար հայ փախարականներուն փրամարդեց «Նանսէնեան անձնագիր», որ մասամբ թեթեւցու անոնց դրութիւնը, հայ գաղթականներուն հորիդային Հայաստան վերադարձներու համար պայմաններ ստեղծել առաջարկեց եւ գլխաւորեց հայրենադարձութեան յանձնաժողովը: Այդ մեծագործ այր Ֆրիդեմֆ Նանսէի անունով՝ իր մահէն քիչ յետոյ ՄԱԿ-ի կողմէ հիմնադրուած «Նանսէն Գաղթականներու Գրասենակ»ը 1938-ի Դեկտեմբերին՝ գաղթականներու օժանդակութեան գործի մէջ կարարած աշխարանքի համար արժանացաւ Նոպելեան Խաղաղութեան մրցանակի:

Փոքր են բացիկները եւ խիստ առժամայ: Սակայն իրենց փոքր փարածութեան մէջ անոնք կը պարունակեն պարկերայից պարամութիւններ: Հոն բացիկները նաեւ ծնունդ կու տան կարօտալի գրոյցներու: Այսօր, յարգելի ընթերցող, կը յորդորեմ, որ դուք ալ բանաք ձեր ընթանեկան սնուրկ-արկիւները եւ կրկին կարդաք ինչ ընկերներու, ինչ դրացիներու կամ՝ ինչ սիրելիներու գրի առած ազնիւ ու ջերմ խօսքերը, յանուն ինչ օրերու բարի յիշարակին՝ այդ սակաակեաց թղթիկներուն երկրորդ կեանք մը պարգեւած ըլլալու հաճոյքով: